

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

### «ՄԱՄՈՒԼԷՅԷՄ» ԿԱՅՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Կայքում բավականին շատ են կետրադրական, խնդրառական սխալները, օտարաբանությունները: Գրավոր տեքստը չխմբագրված կամ վատ խմբագրված վիճակում հանրայնացնելը թույլատրելի չէ:

Վրիպակներն անտեսել ենք:

Ներկայացնում ենք նկատված սխալների մի մասը:

#### Խնդրառության սխալներ

«Բոլոր ցանկացողներին **հնարավորություն կտրվի մասնակցել** Ջահերով երթին»  
(«Ջահերով երթն այս տարի կմեկնարկի...», 03.04.2024):

Շրջենք շարադասությունը, և խնդրառության սխալը ակնհայտ կդառնա՝ «Բոլոր ցանկացողներին **մասնակցել հնարավորություն կտրվի**»:

Պետք էր գրել՝ «Բոլոր ցանկացողներին **հնարավորություն կտրվի մասնակցելու** Ջահերով երթին» կամ «Բոլոր ցանկացողներին Ջահերով երթին **մասնակցելու հնարավորություն կտրվի**»:

«... Ռուսաստանը **նպատակ ունի** աստիճանաբար **գրավել** Լուգանսկի, Խարկովի շրջանները» («Ուկրաինան 2000 կմ ամրություն է կառուցում...», 28.03.2024):

Ռուսաստանը ոչ թե **գրավել նպատակ ունի**, այլ **գրավելո՛ւ նպատակ ունի**:

Պետք էր գրել՝ «... Ռուսաստանը **նպատակ ունի** աստիճանաբար **գրավելու** Լուգանսկի, Խարկովի շրջանները»:

«Բոլոր նրանց, ովքեր **ներգրավված են եղել ահաբեկչություններին...**» («ՌԴ ԱԳՆ-ն պահանջել է ձերբակալել Ուկրաինայի ԱԱԾ ղեկավարին», 31.03.2024):

Ներգրավվում են ոչ թե որևէ *բանին*, այլ որևէ *բանում*:

Պետք էր գրել՝ «Բոլոր նրանց, ովքեր ***ներգրավված են եղել ահաբեկչություններում...***»:

«Վրաստանը ***հրաժարվեց*** Արևմուտքի ձեռքում աշխարհաքաղաքական մանրադրամ ***դառնալ*** և հակառուսական քաղաքականություն ***վարել***» («Փաշինյանը ներկայանում է որպես արևմտամետ...», 11.04.2024):

Հրաժարվում են ոչ թե որևէ *բան*, այլ որևէ *բանից*:

Ուրեմն պետք էր գրել՝ «Վրաստանը ***հրաժարվեց*** Արևմուտքի ձեռքում աշխարհաքաղաքական մանրադրամ ***դառնալուց*** և հակառուսական քաղաքականություն ***վարելուց***»:

### **Սխալ խնդրառություն և դերանվան սխալ գործածություն**

«Ի՞նչ դրական աշխատանք են արել, որ ***խնդիր ենք դնում իրենց*** աշխատավարձը ***բարձրացնել...***» («Ի՞նչ դրական աշխատանք են արել...», 02.04.2024):

Խնդիր են դնում ոչ թե որևէ բան ***անել***, այլ ***անելու***: Եթե հանձնաժողովը խնդիր է դնում ***բարձրացնելու*** որոշ պետական ծառայողների աշխատավարձը, ուրեմն խոսքը ոչ թե ***իրենց*** աշխատավարձի մասին է, այլ ***նրանց***:

Պետք էր գրել՝ «Ի՞նչ դրական աշխատանք են արել, որ ***խնդիր ենք դնում նրանց*** աշխատավարձը ***բարձրացնելու...***»:

### **Դերանվան սխալ գործածություն**

«Ամաչեցիք և թվեր չհրապարակեցիք, թե ***որքա՞ն*** աշխատավարձ է ստանում...» («Ի՞նչ դրական աշխատանք են արել...», 02.04.2024):

Նշվածը այս համատեքստում հարցական դերանունն չէ, այլ հարաբերական, նախադասությունն էլ բնույթով հարցական չէ, հետևաբար հարցական նշանը տեղին չէ:

Պետք էր գրել՝ «Ամաչեցիք և թվեր չհրապարակեցիք, թե **ողբան** աշխատավարձ է ստանում...»:

«...դաշինքը դժվարությունների է բախվել՝ Կիևին **օգնելու տրամադրելու** հարցում» («Ուր է գնում Հայաստանը Ղարաբաղը կորցնելուց հետո», 05.04.2024):

Եթե առաջին նշումը կարելի է վրիպակ համարել, ապա վերնագրում **ուր** դերանվան վրա դրված հարցական նշանն ավելորդ է, քանի որ այստեղ **ուր**-ը ոչ թե հարցական, այլ հարաբերական դերանուն է:

Պետք էր գրել՝ «...դաշինքը դժվարությունների է բախվել՝ Կիևին **օգնելու/օգնություն տրամադրելու** հարցում»:

«**Ուր** է գնում Հայաստանը՝ Ղարաբաղը կորցնելուց հետո»:

### **Դերանվան և կապի սխալ գործածություն**

«... տարակուսում են, թե **ինչո՞ւ է...** հանդիպումը **շապերի մոտ** անհանգստություն առաջացնում»:

«Նման հանդիպումներն անհանգստություն են առաջացնում տարածաշրջանի **երկրների մոտ**» («Հայաստանը վերածում են Արևմուտքի...», 28.03.2024):

Առաջին նախադասությունը հարցական բնույթի չէ, և **ինչու**-ն այստեղ ոչ թե հարցական դերանուն է, այլ հարաբերական, ուստի հարցական նշանն ավելորդ է: Մյուս նշումները **մոտ** կապի օտարաբան գործածություններ են:

Պետք էր գրել՝ «... տարակուսում են, թե **ինչու է...** հանդիպումը **շապերի մեջ** անհանգստություն առաջացնում»:

«Նման հանդիպումներն անհանգստություն են առաջացնում տարածաշրջանի **երկրներում**»:

### **Օտարաբանություն**

«Մասնակիցները համոզում են, որ ահաբեկիչներին և մանկապիղծներին պետք չէ մահապատժի ենթարկել, և ժողովուրդը կաջակցի դրան, **խնդիրը միայն Սահմանադրական դատարանում է**» («**Crocus-ի** վրա հարձակվողների նկատմամբ մահապատիժ չի կարելի կիրառել»։ Ռուսաստանի Դաշնային խորհուրդ», 27.03.2024): Ակնհայտ է, որ թարգմանել են օտարալեզու լրատվամիջոցից՝ պահպանելով լեզվական կաղապարը: Հայերենում խնդիրը ոչ թե **ինչում է**, այլ **ինչն է/որն է**: Նաև, ընդգծված հատվածը նախընտրելի էր գրել առանձին նախադասությամբ: Համերգասրահի անունը կարելի էր տառադարձել: Այդ դեպքում այն կարիք կլիներ չակերտելու: Պետք էր գրել՝ «Մասնակիցները համոզում են, որ ահաբեկիչներին և մանկապիղծներին պետք չէ մահապատժի ենթարկել, և ժողովուրդը կաջակցի դրան: **խնդիրը միայն Սահմանադրական դատարանն է**»:

««**Կրոկուսի**» վրա հարձակվողների...»:

«Իրավապահները չեն բացառում, որ **Crocus City Hall-ի** ահաբեկիչները **գտնվել են** հոգեմետ դեղերի ազդեցության տակ» («**Crocus-ի** ահաբեկիչները...», 28.03.2024): Օտարագիր անվանումը, և՛ տեքստում, և՛ վերնագրում, տառադարձել էր պետք: Նաև, դեղերի ազդեցության տակ ոչ թե **գտնվում են**, այլ **լինում**: Պետք էր գրել՝ «Իրավապահները չեն բացառում, որ «Կրոկուս Սիթի Հոլլի» ահաբեկիչները **եղել են** հոգեմետ դեղերի ազդեցության տակ»:

«Կրոկուսի» ահաբեկիչները...»:

### **Ոճական սխալ**

«Տարիներ **շարունակ շարունակվող** քննարկումները...» (««Տիտանիկ» ֆիլմում Ռոզային փրկած դուռը...», 26.03.2024): Նշված երկու բառերը միասին գործածելը ոճականորեն ճիշտ չէ, մանավանդ որ խոսքը գրավոր է և խմբագրելի:

Պետք էր գրել, օրինակ՝ «Տարիներ **շարունակ տևող/տևած** քննարկումները...» կամ «Տարիներ **շարունակ քննարկվող այն (հարցը), թե...»**»:

### Սխալ բառաձև

«**Ի թիվ** այլ ահաբեկչությունների...» («ՌԴ ԱԳՆ-ն պահանջել է ձերբակալել Ուկրաինայի ԱԱԾ ղեկավարին», 31.03.2024):

Նշվածը գրաբարյան ձև է, որ անցել է ժամանակակից հայերենին: Գործածվում է միայն հոգնակի թվով:

Հետևաբար պետք էր գրել՝ «**Ի թիվս** (ինչպես՝ *ի շարս*) այլ ահաբեկչությունների...»:

### Սխալ հոլովաձև

«**Ապրիլի 2-4-ին** սպասվում է առանց տեղումների եղանակ», «Օդի ջերմաստիճանը **ապրիլի 1-5-ին** աստիճանաբար կբարձրանա» («Սպասվում է առանց տեղումների եղանակ», 02,04,2024):

Ճիշտ է՝ ապրիլի 2-ին, ապրիլի 4-ին և այլն: Իսկ ապրիլի 2-4-ին, ապրիլի 1-5-ին՝ սխալ է, ընդ որում՝ բավականին տարածված:

Պետք էր գրել՝ «**Ապրիլի 2-4-ը** սպասվում է առանց տեղումների եղանակ», «Օդի ջերմաստիճանը **ապրիլի 1-5-ը** աստիճանաբար կբարձրանա»:

### Սխալ ձևակերպում

«Ժողովրդավարական աշխարհը **կլանված էր Կիևին աջակցելու ուղղությամբ**» («Ադրբեջանը շարունակում է սպառնալ...», 11, 04,2024):

Պետք էր գրել՝ «Ժողովրդավարական աշխարհը **կլանված էր/տարված էր Կիևին աջակցելով/աջակցելու գործով**»:

«ՆԳ նախարարության **կողմից հրականացված** օրենսդրական բարեփոխումների արդյունքում ...» («Փոփոխություններ՝ տուգանային միավորների կիրառման վերաբերյալ», 02.04.2024):

**Կողմից**-ով արհեստական կառույցները կայքում չարաշահվում են: Սա բազմաթիվ օրինակներից մեկն է:

Պետք էր գրել՝ «ՆԳ նախարարության **հրականացրած** օրենսդրական բարեփոխումների արդյունքում ...»:

### Սխալ կերպադրություն

«**Հարցը այն չէ, ինչ** փորձ է արվում...» («Իրական ու «պատմական» Հայաստանների հակադրումն ունի...», 11.04.2024):

Այստեղ զեղչված **թե** շաղկապի փոխարեն պետք էր բույժ դնել: Նաև, հոդվածում խոսքը հենց պատմական Հայաստանի մասին է, և վերնագրում գործածված չակերտներն ավելորդ են: **Հարցը** բառի **ը** որոշիչ հոդը թեև սխալ չէ, բայց այստեղ բարեհնչության տեսանկյունից նախընտրելի կլիներ **և** հոդը գործածել:

Պետք էր գրել՝ «**Հարցն այն չէ՛ ինչ** փորձ է արվում...» կամ «**Հարցն այն չէ, թե ինչ** փորձ է արվում...»:

«Իրական ու **պատմական** Հայաստանների հակադրումն ունի...»:

Կայքում քիչ են կերպարական սխալ չունեցող նյութերը: Հորդորում ենք հեղափոխում խմբագրական աշխատանք կատարելիս ավելի ուշադիր լինել:

Լեզվական վերահսկողության բաժնի  
գլխավոր մասնագետ՝ Երազիկ Գրիգորյան